

**ՀՈԼՈՎԱԿԱՆ ԻՄԱՍՏՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄԸ ԸՍՏ  
ՀԱՅ ԵՎ ԻՄՊԱՆԱՅԻ ՔԵՐԱԿԱՆԱԳԵՏՆԵՐԻ**

*Բանալի բառեր – գուգադրական լեզվաբանություն, հոլովական համակարգ, հոլովական հարաբերություններ, հասկացական հարաբերություններ, տարածական հարաբերություններ, նախդրային համակարգ, նախդրավոր կապակցություններ*

Հայերենը հոլովների հարցում պահպանողական է և պահպանել է հոլովների զգալի քանակություն: Հայերենում հոլովը *հիմք + հոլովական վերջավորություն* կաղապարով կազմվող արտահայտություն է, գոյականի՝ առարկայի վերաբերական հարաբերություններ արտահայտող քերականական փոփոխություն:

Այլ է «հոլով» հասկացության ըմբռնումն իսպաներենում, որ գուգորդվում է *բառ + նախդիր + բառ* կաղապարի հետ և ներկայացնում դասական լեզուների հոլովական վերջավորությունների՝ իսպաներենում նախդիրներով փոխարինվելու վերջնական և կատարյալ պատկերը:

Ըստ հայ քերականագետների՝ «հոլով» հասկացության ըմբռնումը պահանջում է հոյների հիմնած փիլիսոփայական քերականության ուսումնասիրություն, քանզի հունարենի 5 հոլովների հիման վրա ստեղծված տեսությունն է, որ ժամանակի ընթացքում հունարան, լատինարան քերականների ծավալուն գործունեության շնորհիվ նոր մեկնություններ է ստացել, էական դեր խաղացել հայերենի հոլովների որոշման, ճշգրիտ ըմբռնման ու որոշակի ինքնուրույնության ձեռքբերման գործում՝ դառնալով տարաբնույթ մեկնությունների ու վիճահարույց քննարկումների թեմա: Քերականագետների մեծ մասի տարակարծություններն առաջին հերթին վերաբերել են հոլովների վերջնական և ճշգրիտ քանակի որոշմանը, ապա՝ հոլովը բնութագրող բազմաթիվ սահմանումներին<sup>1</sup>: Նման տարաձայնությունները հիմնականում բխել են հոլովի ձևային և իմաստային անխզելի հատկանիշների գնահատումից:

Իսպանացի քերականագետները զարգացման երկարատև ուղի անցած նախդրային համակարգի վերջնական ձևավորման գործում մեծ տեղ են տվել Ոսկեդարում (XVI–XVII դդ.) կատարված քերականական փոփոխու-

<sup>1</sup> Տե՛ս **Адонц Н.**, Дионисий Фракийский и армянские толкователи, СПб., 1915, с. 1-56, **Ջահուկյան Գ.**, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954:

թյուններին: Սա այն ժամանակաշրջանն է, երբ իսպանագիտության մեջ ցանկացած բնագավառում փոփոխություններ ու նորամուծություններ կատարելու համար օրինաչափ երևույթ է դիտվել դասական լեզուներում արդեն առաջադրված կանոններից օգտվելը, որն անհետևանք չի մնացել. ավանդական քերականությանը բնորոշ առանձնահատկությունները գործադրվել են իսպաներենի քերականության մեջ և տեղիք տվել բազմաթիվ փոփոխությունների ու քերականության դիրքորոշման նորովի գնահատման<sup>1</sup>: Ինչպես ասել է Լեմանը, «Փոփոխության շարժիչը լեզվական ստեղծագործականությունն է, որ նպաստում է, որ զրուցակիցն արտահայտության խնդիրների համար նոր լուծումներ փնտրի. լեզուները փոփոխվում են, որովհետև զրուցակիցները ցանկանում են դրանք փոփոխել»<sup>2</sup>: Ռոմանական լեզուների ստեղծման ժամանակաշրջանում նախդիրը դարձել է շարահյուսական կապի արտահայտման գերիշխող միջոց և ստանձնել բառերի միջև հարաբերություններ հաստատող, հոլովների իմաստային արժեքներն արտահայտող միավորի դերը: Ինչպես ասել է Վ. Կոդուխովը, «Նախդիրները կատարում են այնպիսի ձևակազմավորական դեր, ինչպիսին թեքությունները՝ հոլովական ձևի կազմում»<sup>3</sup>:

Հայերենի հոլովների վերջնական քանակի և կատարյալ սահմանման վերաբերյալ արված դիտարկումները, իրենց ընդհանրություններով հանդերձ, հաճախ դրսևորում են նաև տարբերություններ՝ պայմանավորված քերականների անհատական դիրքորոշումներով. հինգ հոլովի կողմնակիցներն առաջնություն են տալիս հոլովի ձևային հատկանիշներին և գտնում, որ բառերի ձևափոխության միջոցով բառերի միջև կապերն ու հարաբերությունները տարբեր կերպ են արտահայտվում<sup>4</sup>, մինչդեռ յոթ

---

<sup>1</sup> Հոլովական համակարգում կատարված էական փոփոխություններն են. 1) հոլովական հարացույցը կրճատվում է, 2) հոլովների կրճատման հետևանքով կատարվում է հոլովների համադրում, 3) նկատվում է հոլովների նախդրավոր կիրառման միտում, 4) հոլովների ավանդական անվանումները փոխարինվում են դասական թվականներով, 5) փոփոխվում է հոլովական հարացույցը ձևավորող օրինակների մատուցման ձևը (տպագրության ի հայտ գալը մեծապես փոխում է քերականական նկարագրության ձևը և նպաստում ուղղաձիգ հարացույցի կիրառությանը), 6) տեղի է ունենում հոլովի քերականական կարգի բովանդակության պլանի էական վերաիմաստավորում (տե՛ս **Колтунова С. В., Михайлова Е. Н.**, Типология испанских грамматик Золотого века // Вопросы филологической науки: Материалы III Международной научной конференции, ЛГУ, 2012, с. 21-26, **Михайлова Е. Н.**, Категория падежа в лингвистических концепциях эпохи Возрождения // Научные чтения Петербургского Лингвистического общества, СПб., 2008, с. 162, **Степанова Л. Г.**, Итальянская лингвистическая мысль XIV-XVI веков, СПб., 2000, с. 191, 396, **Раевская М. М.**, Испанское языковое сознание Золотого века, М., 2006, с. 304):

<sup>2</sup> **Christian L.**, Grammaticalization: synchronic variation and diachronic change, *Lingua e Stile*, 1985, p. 315.

<sup>3</sup> **Кодухов В. И.**, Введение в языкознание, М., 1979, с. 242.

<sup>4</sup> Տե՛ս **Աբեղյան Մ.**, Հայոց լեզվի տեսություն, Երկեր, Զ, Երևան, 1974, էջ 340-399, **Իշխանյան Ռ.**, Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1971, **Ջահուկյան Գ.**, Ժամանակա-

հոլովի կողմնակից լեզվաբանները, որոնք անվան ձևը և նշանակությունը չեն գատում իրարից և հիմք են ընդունում հոլովների արտահայտած հարաբերությունը, հոլովները որոշում են անվան փոփոխված ձևով արտահայտվող հարաբերությամբ, ընդգծում այն հանգամանքը, որ անկախ լեզվական պատկանելությունից՝ աշխարհի բոլոր մարդկանց բնորոշ է լեզվական տարբեր ձևերով ու տարբեր հնչյուններով միանման գաղափարներ հաղորդելը:

Հ. Թումանյանը՝ որպես յոթ հոլովի տեսության կողմնակից, հոլովները որոշել է առարկաների միջև դրսևորվող հարաբերություններով և նշել, որ «Առարկաների միջև եղած հարաբերությունները ցույց տալու համար՝ գոյականները փոփոխում են իրանց վերջավորությունները. այդ վերջավորությունները կոչվում են **հոլով** (падеж), իսկ հոլովները յոթն են»<sup>1</sup>:

Ժամանակակից հայոց լեզվի հոլովները յոթն է համարել Ա. Մարգարյանը. «Յոթ հոլովի փոխարինումը հինգով անխուսափելիորեն աղճատում է հայերենի հոլովական համակարգի իրական պատկերը և մթագնում սեռականի ու հայցականի ինչպես քերականական, այնպես էլ իմացաբանական-ճանաչողական արժեքն ու նշանակությունը»<sup>2</sup>:

Իրենց գրքերում յոթ հոլովի տեսությունն են հավաստել նաև Հ. Դադբաշյանը<sup>3</sup>, Վ. Առաքելյանը<sup>4</sup> և շատ ուրիշ քերականներ: Գրեթե բոլոր սահմանումներում հոլովը ներկայացվում է որպես քերականական կարգ՝ իր արտահայտած որոշակի իմաստով և այդ իմաստի արտահայտության համար համապատասխան լեզվին բնորոշ որոշակի ձևով, իսկ այդ սահմանումներում նկատվող տարբերությունները պայմանավորված են հոլովի քերականական և իմաստային տարբեր արժեքների շեշտադրումով:

Իսպաներենի քերականության մեջ բառահարաբերաստեղծ միավորների վերջնական և կատարյալ սահմանումը ևս բազմաթիվ տարակարծությունների տեղիք տվող խնդիրներից է: Չնայած այն հանգամանքին, որ գրեթե բոլոր ձևակերպումներում նախդիրը համարվում է երկու և ավելի միավորների միջև հարաբերություններ հաստատող միջոց, այդուհանդերձ յուրաքանչյուր քերական յուրովի է գնահատում այն՝ ձևակերպման հիմք ընդունելով տարբեր չափանիշներ<sup>5</sup>:

---

կից հայերենի հոլովման համակարգը, Երևան, 1967, **Շարաբխանյան Պ.**, Արդի հայերենի հոլովները, «Սովետական դպրոց» // 1966, թիվ 3:

<sup>1</sup> **Թումանյան Հ.**, Հայոց աշխարհաբար լեզվի համառոտ ստուգաբանություն, Թիֆլիս, 1915, էջ 30:

<sup>2</sup> **Մարգարյան Ա.**, Հայոց լեզվի քերականություն, Ձևաբանություն, Երևան, 2004, էջ 118:

<sup>3</sup> Տե՛ս **Դադբաշյան Հ.**, Արևելահայ աշխարհաբարի քերականությունը, Թիֆլիս, 1913, էջ 40-41:

<sup>4</sup> Տե՛ս **Առաքելյան Վ.**, Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957, էջ 11-171:

<sup>5</sup> Տե՛ս **Деев М. Н.**, Предлоги современного испанского языка, М., 1973, с. 8:

Սույն հոդվածում անդրադառնում ենք միայն ժամանակակից քերականների բնորոշումներին: Նրանցից առավել նշանավորներն են (հաշվի ենք առնում կոնկրետ նախդրային համակարգի ուսումնասիրության մեջ կատարած նրանց ներդրումները) Ռ. Սեկոն, Խիլի Գայան, Կրիադո դը Վալը, Ռոկա Պոնսը, Ալֆինա Ֆրանչը և Խ. Մ. Բլեկուան, Ալարկոս Լյորախը, Էռնանդես Ալոնսոն և այլք:

Ռ. Սեկոն, իսպաներենի քերականության մեջ նախդիրը բնութագրող ամենաընդունելի ձևակերպումն ընդունելով հանդերձ, իր շարահյուսական ուսումնասիրության մեջ մի կողմից՝ կարևորում է *նախդիրի կառուցվածքային և գործառական արժեքը*, իսկ մյուս կողմից՝ *նախդիրի ձևական առանձնահատկությունը*: Եթե նախդիրի կառուցվածքային և գործառական արժեքի կարևորման դեպքում հաշվի է առնվում այն հանգամանքը, որ նախդիրը՝ որպես արտահայտված իմաստին հաստատուն արժեք տվող բառ, չի կարող կիրառվել այլ եղանակով և գրեթե երբեք չի փոխարինվում, ապա երկրորդ դեպքում շեշտադրվում է այն փաստը, որ նախդիրը կանոնավոր ձևով նախորդում է հարաբերվող միավորին<sup>1</sup>: Բայց այս սահմանումը քերականագետների կողմից չի ընդունվում որպես նախդիրի կատարյալ և վերջնական բնորոշում, քանզի այն թույլ չի տալիս բացահայտելու նախդիրների և շաղկապների միջև եղած տարբերությունը, ինչպես՝ *Juan con su hermano – Խուանն իր եղբոր հետ* և *Juan y su hermano – Խուանն ու իր եղբայրը*: Այլ է Խ. Գայայի մոտեցումը, որ կարևորում է հարաբերվող միավորների դերը և նախդիրի՝ համապատասխան հարաբերություններում կապի հաստատման միջոց ծառայելու հիմնական գործառույթը: Այսինքն՝ մի կողմից՝ շեշտը դրվում է նախդիրների գործառական դերի վրա (նախդիրները ծառայում են իբրև նախադաս և հետադաս միավորների կապի հաստատման միջոց), իսկ մյուս կողմից՝ ցույց է տրվում նախդիրի՝ հարաբերվող միավորների նկատմամբ ունեցած հակումը. այդ միավորների հետ միասին նախդիրը ձևավորում է իմաստային ամբողջություն<sup>2</sup>: Կրիադո դը Վալը, որը նախդիրները միավորում է «կապ» անունով, գտնում է, որ նախդիրների կիրառությունն ավարտին է հասցնում քերականական կազմակերպումը՝ միահյուսելով նախադասության քիչ թե շատ էական միավորները<sup>3</sup>: Ռ. Պոնսի համար նախդիրը հիմնական բառը նրա լրացումների հետ կապող և միաժամանակ ստորադասող միավոր է<sup>4</sup>: Այս առումով Պոնսը հեռանում է դեռևս Սալվայի և Բելլոյի կողմից ընդունված այն դիրքորոշումից, որտեղ

<sup>1</sup> Տե՛ս **Seco R.**, Manual de gramática española, Madrid, 1960, p. 156:

<sup>2</sup> Տե՛ս **Gili Gaya S.**, Curso superior de sintaxis española, Barcelona, 1943, p. 246:

<sup>3</sup> Տե՛ս **Criado de Val M.**, Gramática española y comentario de textos, Madrid, 1958:

<sup>4</sup> Տե՛ս **Roca Pons J.**, Introducción a la gramática, Barcelona, 1972, p. 323-331:

շեշտը դրված էր նախդիրների ձևափոխող և մասնավորող արժեքների վրա<sup>1</sup>: Ալարկոսը նախդիրները համարում է կախյալ միավորներ, որոնք դրվում են գոյականների, ածականների և մակբայերի կողքին<sup>2</sup>: Է. Ալոնսոն նախդիրը բնորոշում է որպես ցուցիչ կամ նախասանվանական նշույթ, որ լրացնում, սահմանագատում և ճշգրտում է հարաբերվող առաջին միավորի բովանդակությունը<sup>3</sup>: Վ. Բրյոնդալը նախդիրը սահմանում է որպես բառ, որի կիրառության հիմնական նպատակը հարաբերությունների արտահայտությունն է՝ առանց կոնկրետ առարկաների կամ իրականության երևույթների հետ անմիջական կապի: Տալով նախդիրի սահմանումը լեզվի մեջ, որտեղ նախդիրն ունի ընդամենը մեկ, առավել վերացական նշանակություն (այս գաղափարի կողմնակից է եղել նաև Մ. Լոպեսը<sup>4</sup>)՝ նա միաժամանակ կարևորում է ներըմբռնումը որպես այն միակ գործիքը, որը թույլ է տալիս հաստատելու այս կամ այն նախդիրի ճշգրիտ կիրառությունը<sup>5</sup>: Այս վերջին տեսակետը քերականագետները թերի են համարել, քանզի նախդիրի ճշգրիտ կիրառության համար անհատի ներըմբռնումը պարտադիր պայման չեն դիտել. անհատը կարող է ճիշտ կիրառել նախդիրը նաև նախդրային առանձին կառույցների առանձնահատկությունների և խնդրառության կաղապարների յուրացման միջոցով<sup>6</sup>: Բ. Պոտիեն տվել է խոսքի մեջ նախդիրի լավագույն ձևակերպումներից մեկը, որում նախդիրը սահմանվում է որպես երկու միավորների կապի հաստատման միջոց, կարևորվում է նախդիրի բազմաթիվ նշանակություններ ունենալու հանգամանքը (խոսքը վերաբերում է նախդիրի բոլոր կոնկրետ կիրառություններին)<sup>7</sup>: Դեմ դուրս գալով վերոնշյալ քերականագետներին՝ Լ. Կարետերն իր «Բանասիրական տերմինների բառարանում» նախդիրը սահմանում է որպես բառին կամ անկախ նախադասությանը նախորդող ձևույթ<sup>8</sup>: Այս սահմանումը նույնպես զերծ չի մնում քննադատություններից, քանզի քերականագետների մեծ մասը նախդիրն իրականում ձևույթ չի համարում և գտնում է, որ նախդիրը ձևույթ է դառնում միմիայն մակբայի արժեք ունեցող կապակցություններում, որտեղ որպես

<sup>1</sup> Sté u **Salvá V.**, Gramática de la lengua española según ahora se habla, Madrid, 1988, p. 288, Bello A., Gramática de la lengua castellana, Caracas, 1995, p. 32-35: Sté u նաև <http://www.cervantesvirtual.com/FichaObra.html?Ref=7170>:

<sup>2</sup> Sté u **Alarcos Llorach E.**, Gramática de la lengua española, Madrid, 1994, p. 214:

<sup>3</sup> Sté u **Hernandez Alonso C.**, Gramática funcional del español, Madrid, 1996, p. 646:

<sup>4</sup> Sté u **Luisa López M.**, Problemas y métodos en el análisis de preposiciones, Madrid, 1970, p. 102:

<sup>5</sup> **Brøndal V.**, Théorie des prépositions. Introduction à une sémantique rationnelle, Copenhague, 1950. Մեջբերված է ըստ **Դեբե Մ. Ի.**, նշվ. աշխ., էջ 3, 8:

<sup>6</sup> Sté u **Щербя Л. В.**, Преподавание иностранных языков в средней школе // Общие вопросы методики, М.-Л., 1947, с. 93, **Gili Gaya S.**, Curso superior de sintaxis española, Barcelona, 1961, p. 187:

<sup>7</sup> **Pottier B.**, Systématique des éléments de relation. Etude de morphosyntaxe structural romane, Paris, 1962, p. 18. Մեջբերված է ըստ **Դեբե Մ. Ի.**, նշվ. աշխ., էջ 8:

<sup>8</sup> Sté u **Lázaro Carreter F.**, Diccionario de términos filológicos, Madrid, 1953, p. 82-85:

այդպիսին իրականում գոյություն չունի և երկու ինքնուրույն բառերի միջև ոչ մի կապ չի հաստատում, ինչպես՝ *a tientas* «խարխափելով», *a ciegas* «կուրորեն», *de balde / en vano* «զուր, ապարդյուն» ևն: Նախդիրը բառային իմաստն ամբողջությամբ կորցրած քերականական միավոր դիտելով՝ Լ. Կարետերը չի ընդունում, որ գրեթե բոլոր նախդիրները (ներառյալ նախդրավոր կապակցությունները) ունեն իրենց իմաստները:

Այսօր իսպաներենում նախդիրները չեն համարվում բառային իմաստից զուրկ միավորներ, և ընդունված չէ այն դիտարկումը, որ նախդիրները պատկանում են զուտ քերականական ոլորտին. ընդունելի է համարվում պարզապես այն, որ քերականական իմաստը նման կարգի բոլոր միավորների համար ընդհանրական բնույթ է կրում, մինչդեռ դրանք բոլորն էլ իրենց բառային իմաստներով տարբերվում են միմյանցից, ինչպես՝ *ir a Moscú* «մեկնել Մոսկվա», *ir de Moscú* «հեռանալ Մոսկվայից» և այլն:

Իսպաներենի ակադեմիական քերականությունը տալիս է «նախդիր» հասկացության հետևյալ ամբողջական բնութագիրը. «Նախդիրը լատինական ծագում ունեցող բառի մի տեսակ է (լատ.՝ *praepositiō*), որ աչքի է ընկնում իր *անփոփոխ ձևով* (անկախ այն հանգամանքից, թե որտեղ է դրվում նախդիրը՝ գոյականից, թե բայից առաջ, այն միշտ մնում է անփոփոխ), *անշեշտ կիրառությամբ* (բացառություն է *համաձայնության* իմաստ նշանակող *según* նախդիրը) և *տարատեսակ հարաբերություններ հաստատող բնույթով* (նախդիրներում հիմնական նշանակությունների անորոշությունն ավելի ակնհայտ է, քան այլ բառերում)»<sup>1</sup>:

Վերը նշված սահմանումների բազմազանությունը թերևս, մեր կարծիքով, ամենևին չի սահանափակում նախդիրի մասին ունեցած այն ընդհանուր պատկերացումը, ըստ որի՝ սահմանափակ քանակով բնորոշվող քերականական այս միջոցը երկու միավորների միջև հարաբերության արտահայտման լավագույն ձևն է:

Այսօր հայերենի քերականության մեջ հոլովների պակասը լրացնում են *կապերը* (անգամ կարող են նրանց փոխարեն կիրառվել), որոնք, ինչպես և հոլովները, ցույց են տալիս ստորադասական հարաբերություններ, որոշում բառի պաշտոնը: Արտահայտելով նույն հարաբերությունները՝ այս երկու միջոցները ցուցաբերում են ընդամենը ոճական-նրբերանգային տարբերություն:

Իսպաներենի քերականության մեջ կապերի նման ցանկացած մակարդակի հարաբերության կոնկրետության երանգ հաղորդող լրացուցիչ միջոցները բարդ նախդիրներն ու նախդրային կապակցություններն են<sup>2</sup>: Նրանց

---

<sup>1</sup> Stéu El Real Academia Española y Asociación de Academia de la Lengua Española. Nueva gramática básica de la lengua española, Barcelona, Espasa, 2011, p. 25-165: Stéu նաև Definición de preposición - Qué es, Significado y Concepto <http://definicion.de/preposicion/#ixzz3Vsv33BIY>:

<sup>2</sup> Stéu **Jaime Cisneros L.**, Lengua y estilo, Lima, 1959, p. 79:

առաջացումն անհրաժեշտորեն կատարվող փոփոխությունն է, ինչպես ժամանակին նշել է Ռ. Կուերվոն. «Դարերի ընթացքում պարզ նախդիրներով ձևավորված բարդ նախդիրների ու նախդրային կապակցությունների լայն զարգացման և պահպանման գործընթացի մեջ պետք է տեսնել միայն լեզվի զարգացման միտում, որ թույլ է տալիս ժամանակակից իսպաներենում արտահայտելու ցանկացած մակարդակի ճշգրիտ հարաբերություն: Եվ ինչքան «բազմահարկ» են պարզ նախդիրներով ձևավորված կառույցները, այնքան ճշգրիտ և կոնկրետ են նրանցով արտահայտվող հարաբերությունները»<sup>1</sup>:

Ստորև ներկայացնում ենք զուգադրվող լեզուների բովանդակության պլանի շրջանակներում տեղ գտած իմաստային հարաբերությունները: Հայերենի քերականության մեջ հոլովական համակարգի ըմբռնումը ենթադրում է *յոթ* հիմնական և մի շարք մասնավոր իմաստների արտահայտում, որոնց համարժեքներն իսպաներենում դուրս չեն գալիս *տարածական, ժամանակային* և *հասկացական* ոլորտներում տեղ գտած իմաստային հարաբերությունների սահմաններից: Իսպաներենի քերականության մեջ իմաստային հարաբերությունները նշանակվում են *26 պարզ նախդիրների* և նրանցով ձևավորված *բարդ նախդիրների ու նախդրային կապակցությունների* միջոցով<sup>2</sup>:

Հայերենի հոլովական իմաստների համարժեքներն ու տարբերություններն իսպաներենից ունեն հետևյալ ընդհանուր պատկերը.

1. «Անկախ, ներունակական հարաբերություն»<sup>3</sup>, ուղղական հոլովի գլխավոր գործառույթը, օր.՝ *Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց հայոց գրերը*: Իրացվում է մի շարք մասնավոր դրսևորումներով, որոնք են՝

- *փոխակերպված ենթակայի իմաստ*. *Դեռ լույսը չբացված՝ գործը ներխուժեց քաղաք,*
- *ստորոգելիի իմաստ*. *Հրաշագործ մանուկ էր,*
- *որոշիչի իմաստ*. *Դատավոր Ալավերդյանն ավարտեց դատավարությունը,*
- *անվանական անդեմ նախադասության գլխավոր անդամի արտահայտած իմաստ*. *Երևան: Միրզ ու բանջարեղեն,*
- *կոչական*. *Երեխանն՝ ը, դո՛ւրս եկեք դասարանից* ևն:

Իսպանագիտության մեջ անկախ, ներունակական հարաբերությունը բառի ուղիղ ձևով նշանակվող իմաստների ամբողջությունն է՝ որպես

<sup>1</sup> Cuervo R. J., Notas a la gramática de A. Bello, Madrid, 1988, p. 143.

<sup>2</sup> S´u El Real Academia Española y Asociación de Academia de la Lengua Española. Nueva gramática básica de la lengua española. Barcelona, 2011, p. 25-165, **Bosque I. y Demonte V.**, Gramática de la lengua española, Madrid, Espasa, 1999, p. 567-700:

<sup>3</sup> Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 399:

աշխարհի մասին ունեցած մեր պատկերացումների պարզագույն արտահայտում: Այդ իմաստներն են՝

- **ակնհայտ ենթակայի իմաստ.** *El Sol es la estrella más cercana a la Tierra* «Արևը Երկիր մոլորակին ամենամոտ աստղն է»,
- **ինքնին ենթադրվող կամ զեղչված ենթակայի իմաստ.** *Corrí hasta la casa* – «Վազեցի մինչև տուն»
- **մաքուր անվանական նշանակում.** *!Bobadas;* - **Հիմարություն'ն,**
- **տարածական ընդլայնում ցույց տվող իմաստ.** *El ejército recorrió diez pies* «Զորքը տասը քայլ առաջ անցավ» (հայ.՝ **հայց.** հոլով),
- **Ժամանակահատված ցույց տվող իմաստ.** *El padre veló toda la noche* – «Հայրիկն ամբողջ գիշեր աշխատեց»,
- **կոչական.** *Madre, dame ese libro* «Մայրի՛կ, տո՛ւր ինձ այն գիրքը»,
- **վերնագրային կամ անվանումի հարաբերություն.** *El río «Գետը»:*

2. **Պատկանելության հարաբերություն, սեռական հոլովի գլխավոր գործառույթը,** ցույց է տալիս **առարկայական հատկացում,** ինչպես՝ *արևի ջերմություն:* Իրացվում է մի շարք մասնավոր դրսևորումներով և արտահայտում՝

- **որոշիչի իմաստ.** *կյանքի դաս,*
- **ենթակայի իմաստ.** *Ուսուցչի բարկանալն ակնթարթ տևեց,*
- **ստորոգելիի իմաստ.** *Նա մեծ պաշտոնի էր,*
- **բաղկացության իմաստ.** *Երեխաների մի խումբ անդադար աղմկում էր,*
- **ծագման իմաստ.** *երեխայի ծնողները,*
- **Ժամանակի իմաստ.** *հնադարի գրողները,*
- **Ժամանակի իմաստ՝ արտահայտված կապական կապակցություններով.** *առավոտվա կողմ, արևամուտի հետ,*
- **տարածական իմաստ՝ արտահայտված կապական կապակցություններով.** *տան առաջ:*

Կապական կապակցություններով են արտահայտվում նաև վերաբերության (օր.՝ *առողջության մասին, հարազատների նկատմամբ*), նպատակի (օր.՝ *քննության նպատակով*), պատճառի (օր.՝ *ծանր հիվանդության պատճառով*), միասնության (օր.՝ *հարազատների հետ*) և փոխարինման (օր.՝ *Լավության դիմաց վատություն արեց*) իմաստները:

Իսպաներենում վերոնշյալ իմաստները (բացի ժամանակ և տարածություն ցույց տվող իմաստներից) ներկայացնում են հասկացական ոլորտը և միաժամանակ զուգադրելի եզրեր գտնում հայերենի մյուս հոլովները ներկայացնող հարաբերությունների հետ: Այսպես՝

- **ստացականության կամ պատկանելության հարաբերություն.** *el libro de Juan* «Խուանի գիրքը»,



- **որոշիչի իմաստ.** el chico **de** ojos grandes «մեծ աչքերով տղան» (հայ.՝ **գործ.** հոլով), el mes **de** noviembre «նոյեմբեր ամիսը» (հայ.՝ **ուղղ.** հոլով),
- **ստորոգելիի իմաստ.** Son **de** diferentes familias «Տարբեր ընտանիքներից են» (հայ.՝ **բաց.** հոլով),
- **մասնականության իմաստ.** los tres **de** los niños «երեխաներից երեքը» (հայ.՝ **բաց.** հոլով),
- **ծագման իմաստ.** los escritores **del** mundo «աշխարհի գրողները»,
- **կեղծ ստացականության կամ վերաբերության իմաստ.** eco **del** reloj «Ժամացույցի արձագանք»,
- **թեմայի հարաբերություն.** hablar **de** (sobre, acerca **de**) alguien «խոսել ինչ-որ մեկի մասին» կամ «ինչ-որ մեկից» (հայ.՝ **սեռ.** հոլով + **կապ** կամ **բաց.** հոլով),
- **նպատակի իմաստ.** Voy a la universidad **para** el examen «Գնում եմ համալսարան քննության» (հայ.՝ **տր.** հոլով),
- **պատճառի իմաստ.** Todo es **por** tu culpa «Ամեն ինչ քո մեղքով է (հայ.՝ **գործ.** հոլով), tiritar **de** frío «ցրտից դողալ» (հայ.՝ **բաց.** հոլով),
- **Ժամանակի իմաստ.** siglo **del** renacimiento «վերածննդի դարաշրջան», en enero «հունվարին» (հայ.՝ **տր.** հոլով), hacia las dos «(մոտավորապես) ժամը երկուսին» (հայ.՝ **տր.** հոլով),

**3. Հանգման կամ մատուցման հարաբերություն, տրական հոլովի գլխավոր գործառույթ:** Ցույց է տալիս գործողության հանգում, անմիջական ձևով նշվում է առարկաների միջև գործող հարաբերություն, որտեղ մեկը մոտենում, տրվում, հանգում է մյուսին, ինչպես՝ *մոտենալ ծառին*: Իրացվում է հետևյալ մասնավոր դրսևորումներով՝

- **մատուցման իմաստ.** *Ողջ գումարը նվիրաբերեց աղքատներին,*
- **կապի իմաստ.** *Մերվել է իր նոր ընտանիքի անդամներին,*
- **հաղորդման իմաստ.** *Ամեն քայլի համար բացատրություն է տալիս ամուսնուն,*
- **ստացականության իմաստ.** *Վթարի ենթարկված ավտոմեքենան ուրիշին էր պատկանում,*
- **տարածական իմաստ.** *նստել տանիքին,*
- **Ժամանակի իմաստ.** *լուսաբացին, հոկտեմբերին, դժվար պահերին,*
- **փոխարինման իմաստ.** *Վատ օրերին փոխարինեցին լավ օրերը,*
- **համապատասխանության իմաստ՝** *արտահայտված կապական կապակցությամբ. հագնվել և խոսել տարիքին համապատասխան,*
- **ուղղության իմաստ.** *հայացքն ուղղել պատին:*

Իսպաներենում հանգման կամ մատուցման հարաբերությունը կապվում է **երկու** կարևոր հիմնահարցերի հետ. մի կողմից՝ առաջ է գալիս

անուղղակի խնդրի հարցը, իսկ մյուս կողմից՝ մի շարք պարագայական լրացումների<sup>1</sup>: Առաջին դեպքում իսպաներենը զուգադրելի եզրեր է գտնում հայերենի բուն հանգման կամ մատուցման իմաստի հետ և արտահայտում ընդունման (օր.՝ *Regalé flores a<sup>2</sup> mi novia* «Իմ հարսնացուին ծաղիկներ նվիրեցի» կամ նպատակակետին հասնելու իմաստ (օր.՝ *ir a Moscú* «մեկնել Մոսկվա», *apartarse a un lado* «մի կողմ քաշվել» (հայ.՝ **հայց.** հոլով), *cercarse a la pared* «մոտենալ պատին» (հայ.՝ **տր.** հոլով), *llegaré hasta la capital* «կհասնեմ մինչև մայրաքաղաք» (հայ.՝ **կապ + հայց.** հոլով)):

Երկրորդ դեպքում իսպանագետներն առանձնացնում են հետևյալ մասնավոր իմաստները՝

- ստացականության իմաստ. *Le besé la mano* «համբուրեցի նրա ձեռքը» (հայ.՝ **սեռ.** հոլով),
- հետարքրքրության կամ հարմարավետության – անհարմարավետության իմաստ (լրացում, որ օգուտ է ստանում կամ վնաս է կրում). *Cortó una rama de roble que le nublabo el sol* «կաղնու մի ճյուղ կտրեց, որ ծածկել էր նրան արևից»,
- անջատման իմաստ. *Le robaron la bicicleta a José* – Նրանից՝ Խոսեից, գողացան հեծանիվը (հայ.՝ **բաց.** հոլով),
- արդյունավետության իմաստ (լրացում, որ ցույց է տալիս բավարարություն, անբավարարություն, պակասություն կամ ավելցուկ). *A Kiko le falta un millón para construir la piscina* – Ջրավազանի կառուցման համար Կիկոյին մեկ միլիոն է պակասում,
- փոխադարձ հարաբերության իմաստ (լրացում, որի համար ընդունելի է այն, ինչ ցույց է տալիս բայը). *A Juan le pareció buenísima la idea de Ana* «Խուանին Աննայի գաղափարն ամենալավը թվաց»<sup>3</sup>:

<sup>1</sup> Իսպաներենի քերականություններում պարագայական լրացումները, ինչպես ստել է Ա. Բելլոն, ոչ այլ ինչ են, եթե ոչ «հավելորդային տրականներ» (**Bello A.**, Gramática de la lengua castellana, Madrid, 1988, p. 757): Է. Ա. Լյորախը դրանք անվանել է «սահմանային տրականներ» (**Llorach E. A.**, Gramática de la lengua española, Madrid, 1994, p. 220), Ս. Ֆ. Ռամիրեսը՝ «հետարքրքրության տրականներ» (**Fernández S.**, Ramírez. Gramática española, Madrid, 1951, p. 193):

<sup>2</sup> *Մատուցման* իմաստի արտահայտության համար հիմնական **a** նախդիրը փոխարինվում է **para** նախդիրով, ինչպես՝ *Compré flores a (para) mi madre* – Իմ մայրիկին (մայրիկիս համար) ծաղիկներ գնեցի: Բայց խոսքը չի վերաբերում լիակատար փոխարինմանը, քանզի այս երկու նախդիրները շատ հաճախ կիրառվում են միևնույն նախադասության մեջ և արտահայտում երկու տարբեր՝ *մատուցման* և *նպատակի* իմաստներ, ինչպես՝ *La señora les dio unos bombones a los García para sus hijos* – Տիկինը նրանց՝ Գարսիաներին, կոնֆետներ տվեց երեխաների համար (հայ.՝ **տր.** հոլով – **սեռ.** հոլով + **կապ**) (տե՛ս **Ordóñez G.**, Salvador. Los dativos // **Bosque I.**, **Demonte V.**, Gramática descriptiva de la lengua española, Madrid, 1999, § 30.6.3. p. 1895-1906):

<sup>3</sup> Պարագայական լրացումների մասին մանրամասն Տե՛ս **Varó Enrique A.**, **Linares M.**, **Antonia M.**, Diccionario de lingüística moderna. Barcelona, 1997, p. 157-158, **Raimondo G.**, **Cardona**, Diccionario de lingüística, Barcelona, 1991, p. 71, **Demonte V.**, Datives in Spanish, University of Venice, Working Papers in Linguistics 4:1, 1994a, p. 73-96:

4. Ուղիղ խնդիր ձևավորող հարաբերություն, հայցական հոլովի առաջնային գործառույթ, որոշակի է դարձնում բայիմաստը, ինչպես՝ *Հուժկու հարվածով դռները ջարդեց*: Իրացվում է հետևյալ մասնավոր դրսևորումներով՝

- **չափի ու քանակի իմաստ**. *Ստիպված էին մի քանի կիլոմետր ոտքով գնալ, Վերջերս գրեթե միշտ երկու ժամ ուշ է տուն գալիս*,
- **գնի կամ արժեքի իմաստ**. *Գիրքն արժե երկու հազար դրամ*,
- **ժամանակի իմաստ**. Առավոտից **գիշեր** աշխատում է, Ողջ **ամառ** հանգստացավ,
- **ժամանակի իմաստ՝ արտահայտված կապական կապակցությամբ**. Մինչև ամուսնու վերադարձը ձայն անգամ չէր հանում,
- **տեղի իմաստ**. Շնչակտուր հասավ **տուն**, Երկար տարիներ անց վերադարձավ **հայրենիք**:

Ժամանակակից իսպաներենի քերականություններում ուղիղ խնդրի<sup>1</sup> քննության համար առանձնացված են հետևյալ հստակ սահմանները՝

- **անցողական բայերով պահանջվող գոյականական լրացում**. El lee un **libro** «Նա **գիրք** է կարդում»,
- **անցողական բայերով պահանջվող դերանվանական լրացում**. Mi hermana **lo** ha perdido «Իմ քույրը **դա** կորցրել է»,
- **անվանական շարույթով ձևավորված լրացում**. El agricultor corta **las ramas del árbol** «Հողագործը կտրում է **ծառի ճյուղերը**»:

Չայերենի հայցական հոլովին բնորոշ մասնավոր իմաստները իսպաներենի քերականություններում կազմում են հասկացական ոլորտի բաղկացուցիչ մասերը, ինչպես՝ **չափի ու քանակի իմաստ**, օրինակ՝ *Ella tarda **media hora** en llegar a la oficina* «Նա **կես ժամ** է ծախսում աշխատանքի հասնելու համար», *Ni siquiera se oye **alguna palabra** de su boca* «Նույնիսկ **մի բառ** չի լսվում նրա բերանից» (հայ.՝ **ուղղ.** հոլով), **գնի ու արժեքի իմաստ**, օրինակ՝ *Ganar el premio mayor que vale **dos mil euros*** – Շահել լավագույն մրցանակը, որ արժե **երկու հազար եվրո** (հայ.՝ **ուղղ.** հոլով):

5. **Անջատման հարաբերություն, բացառական հոլովի** գլխավոր գործառույթ, որ արտահայտում է **ելակետի կամ սկզբնակետի, հեռացման կամ անջատման** իմաստներ, ցույց տալիս այն անձը կամ իրը, որից մի բան զատվում ու անջատվում է, ինչպես՝ *հեռանալ տնից*, *հարազատներից*: Իրացվում է հետևյալ մասնավոր դրսևորումներով՝

---

<sup>1</sup> Իսպաներենի քերականություններում ուղիղ խնդրի հարցը միաժամանակ սերտորեն կապված է շնչավորի և անշունչի քերականական կարգի հետ. անշունչի դեպքում գործում է «**Օ նախդիր + գոյական**» կառույցը, ինչպես՝ *Los estudiantes vieron **película*** «Ուսանողները **ֆիլմ** դիտեցին» (հայ.՝ **հայց.** հոլով **Օ** վերջավորությամբ = **ուղղական հոլովաձև**), շնչավորի դեպքում **Օ** նախդիրը փոխարինվում է **a** նախդիրով, ինչպես՝ *Esperamos **a tu hijo*** «Սպասում ենք **քո տղային**» (հայ.՝ **հայց.** հոլով՝ **-ին** վերջավորությամբ = **տրական հոլովաձև**) (տե՛ս *Matte Bon F.*, Gramática Comunicativa del español, España, 2005, p. 297, 301-303):

- **պատճառի ու հիմունքի իմաստ.** Հուզմունքից լալիս էր, Երեխային ձայնից ճանաչեց,
- **ներգործող խնդրի իմաստ.** Նա արհամարհված էր ծնողներից,
- **տարածական իմաստ.** Աշխատանքից միշտ ժամանակին է տուն վերադառնում,
- **ժամանակի իմաստ.** Մանկությունից ընկերություն էին անում,
- **բաղդատության իմաստ.** Փոքրիկները մեկը մյուսից գեղեցիկ էին,
- **ծագման կամ սերման իմաստ.** Հայտնի նկարիչների ընտանիքից էր,
- **նյութի կամ բաղկացության իմաստ.** *Մեկ սենյակից բաղկացած արհեստանոցում ոսկուց ու արծաթից զարդեր էր պատրաստում,*
- **մասի և ամբողջի իմաստ.** *Ողջ ընտանիքից միայն մեկը ողջ մնաց,*
- **վերաբերության իմաստ.** *Անդադար խոսում էին անցած-գնացած օրերից,*
- **սահմանափակման իմաստ.** *Աշակերտը բնագիտական առարկաներից գերազանցիկ էր,*
- **բացատման իմաստ.** *Մտնունացել էր ծնողների կամքից անկախ:*

Իսպաներենի քերականություններում անջատման հարաբերության քննությունը կատարվում է հետևյալ հիմնական իմաստների շրջանակներում.

- **մեկնակետի իմաստ.** Vengo de la universidad «Համալսարանից եմ գալիս», Vuelvo de España «Վերադառնում եմ Իսպանիայից»,
- **անջատման իմաստ.** alejarse de la familia «ընտանիքից հեռանալ», apartarse del camino «ճանապարհից շեղվել», Los germanos se diferenciaban mucho de los franceses «Գերմանացիները ֆրանսիացիներից շատ են տարբերվում»,
- **ծագման իմաստ.** Son del noble linaje «Ազնվազարմ տոհմից են»,
- **բաղդատության իմաստ.** El álamo es alto de la encina «Բարդին կաղնուց բարձր է»,
- **մասի և ամբողջի իմաստ.** Los dichos diputados eran de los elegidos «Վերոհիշյալ պատգամավորները ընտրվածներից են»,
- **բաղկացության իմաստ.** Tu corazón es de piedra «Քո սիրտը քարից է»,
- **ժամանակի իմաստ.** Después de levantarme, bebo un café «Արթնանալուց հետո սուրճ եմ խմում», Está aquí desde ayer «Երեկվանից այստեղ է», De una a dos estoy comiendo «Մեկից երկուսը ճաշում եմ» (հայ.՝ բաց., հայց. հոլով):

6. **Միջոցի հարաբերություն, գործիական հոլովի** գլխավոր գործառույթ, ցույց է տալիս այն առարկան, որով կամ որի միջոցով, օգնությամբ կամ միասնությամբ կատարվում է մի բան, ինչպես՝ *Իր վարքուբարքով գերում է բոլորին:* Իրացվում է հետևյալ մասնավոր դրսևորումներով՝

- **ներգործող խնդրի իմաստ.** *Գետինը ծածկվեց անձրևի կաթիլներով,*
- **հիմունքի իմաստ.** *Նրան օրենքով դատեցին,*

- **ձևի իմաստ.** *Ողջ հոգով* ու *սրտով* նվիրված էր աշխատանքին,
- **չափի ու քանակի իմաստ.** *Սևանի ավազանը խորացել է հիսուն մետրով (հիսունով),*
- **սահմանափակման իմաստ.** *Դեմքով* գեղեցիկ չէր, *բայց հոգով* շատ բարի անձնավորություն էր, *Ծագումով* հայ էր, *բայց վարքուբարքով* թուրքի էր նման,
- **տարածական իմաստ.** *Այնպես կամացուկ էր անցնում փողոցով, որ ոչ ոք չէր նկատում,*
- **Ժամանակի իմաստ.** *Գիշերով* տնից դուրս էր գալիս և *Ժամերով* անհետանում,
- **բաղկացության իմաստ.** *գույնզգույն քարերով* կառուցված տներ,
- **փոխարինության իմաստ.** *ատելությունը փոխարինել սիրով,*
- **գնի իմաստ.** *Ողջ ունեցվածքն ընդամենն իննսուն հազարով վաճառեցին,*
- **ամփոփման իմաստ.** *մի խոսքով, այսպիսով:*

Իսպաներենի քերականություններում միջոցի հարաբերության արտահայտության համար կարևորվում են **երեք** հիմնական առանձնահատկություններ՝

- **ինչ-որ մի բան կատարելու միջոցի կամ եղանակի արտահայտում.** *escribir a máquina* «գրամեքենայով մեքենագրել», *escribir a (con un) lápiz* «մատիտով գրել», *ir a pie (en bicicleta)* «գնալ ոտքով (հեծանիվով)»,
- **գործողության կատարում միջոցի բացակայությամբ.** *Come sin cuchillo ni tenedor* «ուտում է առանց դանակի ու պատառաքաղի» (հայ.՝ **կապ + սեռ.** հոլով):

7. **Պարունակության հարաբերություն, ներգոյական հոլովի** գլխավոր գործառույթ, ինչպես՝ *Կնոջ սրտում այլևս տեղ չունեք:* Իրացվում է հետևյալ մասնավոր դրսևորումներով՝

- **Ժամանակի իմաստ.** *Մեկ ամսում* այնքան էր հյուծվել, որ *անձանաչելի էր դարձել,*
- **տարածական իմաստ.** *Ամբողջ օրն այգում էր:*

Իսպաներենի քերականություններում պարունակության իմաստը տեղայնացման կամ դիրքավորման և ժամանակի իմաստների արտահայտություն է, որոնք իրենց հերթին արտահայտում են շարահյուսական մի շարք մասնավոր իմաստներ և ցույց տալիս առարկաների ու մարդկանց գտնվելու կոնկրետ տեղ ու ժամ: Մասնավոր իմաստները ցույց են տալիս՝

- **ներքին դիրք.** *Me quedé en casa* «Մնացի տանը» (հայ.՝ **տր.** հոլով),
- **բարձր դիրք.** *en (sobre, de sobre, encima de) la cama* –անկողնու վրա (հայ.՝ **սեռ.** հոլով + **կապ**),
- **ցածր դիրք.** *estar bajo (debajo de, abajo) la mesa* –սեղանի տակ գտնվել (հայ.՝ **սեռ.** հոլով + **կապ**),

- տարածության մեջ առարկաների կամ մարդկանց զբաղեցրած ճշգրիտ ու կոնկրետ դիրք. *En el norte de España llueve mucho* «Բսպանիայի հյուսիսում շատ է անձրևում»,
- տարածության մեջ առարկաների կամ մարդկանց զբաղեցրած ոչ կոնկրետ, մոտավոր դիրք. *a la orilla del río* «գետափին» (հայ.՝ տր. հոլով),
- տարածության մեջ առարկաների կամ մարդկանց զբաղեցրած մերձակից կամ հարակից դիրք, որ ցույց է տալիս տարածության մեջ մի կետի հարաբերությունը մյուսի նկատմամբ. *a la puerta de la casa* «տան դռան մոտ» (հայ.՝ սեռ. հոլով + կապ), *a la derecha de este edificio* «այս շենքի աջ կողմում»,
- տարածության մեջ ինչ-որ բանի երկայնքով առարկաների կամ մարդկանց զբաղեցրած դիրք. *La carretera ha sido construida a lo largo de (por) la vía del tren* «Մայրուղին գնացքի ճանապարհի երկայնքով է կառուցվել»,
- տարածության մեջ մեծ հեռավորության վրա առարկաների կամ մարդկանց զբաղեցրած դիրք. *a la altura de 200 metros* «երկու հարյուր մետր բարձրության վրա» (հայ.՝ սեռ. հոլով + կապ),
- առջևի դիրք. *delante de (frente a, enfrente de, al frente de)* mi casa «իմ տան դիմաց» (հայ.՝ սեռ. հոլով + կապ),
- հետին դիրք. *detrás de (tras)* la montaña «սարի հետևում»,
- միջին դիրք. *entre* Francia y Holanda «Ֆրանսիայի և Հոլանդիայի մեջտեղում»,
- նշված տարածությունից դուրս գտնվող մեկ այլ տարածություն. *fuera de la oficina* «գրասենյակից դուրս» (հայ.՝ բաց. հոլով),
- ժամանակային հաճախականություն, որի ընթացքում կատարվում է որևէ գործողություն. *20 kilómetros por hora* «ժամում քսան կիլոմետր»,
- երկու տարբեր իրադարձությունների կատարման ընթացք. *Durante la guerra la gente pasaba hambre* «Պատերազմի ժամանակ ժողովուրդը սովամահ էր լինում»,
- սահմանված ժամանակամիջոց. *Dentro de dos horas* hizo todas las tareas «Երկու ժամում բոլոր հանձնարարությունները կատարեց»,
- որևէ գործողության ավարտ ցույց տվող ժամանակ. *Al final de la clase* todos fueron al cine «Դասերի վերջում բոլորը կինո գնացին»:

**Իսպաներենում** նախադասության անդամների միջև տարաբնույթ հարաբերությունների հաստատման գործընթացն իրականանում է սպասարկու բառերի, այն է՝ նախդիրների միջոցով **երեք** հիմնական իմաստային ոլորտների և նրանցից յուրաքանչյուրին բնորոշ **մի շարք** մասնավոր իրացումների սահմաններում:

Ուսումնասիրության համար ընտրված տվյալ ուղին լայն հնարավորություն է տալիս ընդգծելու այն հանգամանքը, որ տարբեր լեզուների քերական-

նագետները միևնույն իմաստները, լեզվի միևնույն նյութը ներկայացնում են տարբեր եղանակներով, որոնց միջև հնարավոր է որոշակի հարաբերակցություն սահմանել:

**Нарине Мелконян – *Выражение падежных значений согласно армянским и испанским грамматикам***

Данная статья посвящена исследованию общего понимания падежных отношений в армянском и испанском языках. С точки зрения сопоставительной лингвистики выявляются такие вопросы, которые в армянском и испанском языках с одной стороны связаны с разделением различных отношений, образующихся между объектами, событиями, фактами, а с другой стороны – с выявлением роли и значения, которые имеет каждый из них в грамматической структуре языка.

**Narine Melkonyan – *Expression of Declensional Significance According to the Armenian and Spanish Grammarians***

The current article focuses on the investigation of common understanding of the means of expression of case relations in the Armenian and Spanish languages. In terms of comparative linguistics in the Armenian and Spanish languages such issues, that on the one hand are related to the separation of different relationships formed between objects, events, facts, and on the other hand, to the identification of the role and significance that each of them has in the grammatical structure of the language, are revealed.